


եղած է Թէոփանոյի եղբայրներէն մին: Սա-  
կախ Ելիմպէտէ, — արուեստով՝ բժիշկ, —  
Զմէկիկի հիւանդութեան արդիւնքները է նը-  
կատի առնելով, անկարելի կը համարի սր  
թոնաւորուած ըլլալ, որովհետեւ այդ երե-  
ւոյթները ս'չ մէկ թոյնի յատուկ չեն: Հե-  
տեւորար իր հիւանդութիւնն որիչ բան չէր,  
բայց եթէ մին ջերմի այն չարատանջ տե-  
սակներէն, զոր Ասիայէն իր հետ բերած էր:

Մեծած պահուն՝ յիտուն և մէկ տարեկան  
էր Զմէկիկ: Թաղաւորած էր վից տարի և  
մէկ ամիս: Այս փոքրիկ ժամանակամիջոցը  
բաւական եղած էր իրեն՝ պատմութեան մէջ  
անմահանալու, իրրի Ռիզանովնի Ալեք-  
սանդար: Մեծ ու քոթը, կ'ըսէ Ալպուֆարան,  
լացին իր մահուան վրայ: Իտլանտին Երկրա-  
չափ իր դամբանականը խօսեցաւ: Ժողովուր-  
դը ազմկաւոր ընդունելութեան մը պատրաս-  
տուած, յուզարհաւորութիւն կը կատարէր,  
— բայց անշուշտ ամենէն շքեղ յաղթմանակն  
է, Թաղաւորի մը համար, այն յուզարկա-  
ւորութիւնը՝ ուր կ'արտասուէ ամէն աղբաւ  
և ամէն զինուոր:

Հ. Կ. Տ. ՍԱԼԱՆԿՆ



Հ Ա Յ Ա Ջ Գ Ի

### ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԸՆԹԱՑԱԽԱՐՏԷ

Ուրախ սրտով կը ծանուցանենք ազգիս՝ Մխի-  
թարեան նախկին աշակերտներէն՝ Պր. Անտոն Մի-  
միտեանի կոտանդնուպուսեցւոյ, Պր. Ռափայէլ  
Պազարեանի Երզնկացւոյ, Պր. Պապտիկ Յով-  
հաննիսեանի Մշեցւոյ և Պր. Էլեոն շինկեօցեա-  
նի Տրապիզոնեցւոյ, 1905 տարուոյ մէջ Համա-  
լսարանական ընթացքին լիուր յաղորթեամբ  
աւարտելնին՝ Պատուա թաղաքի մէջ, և հանդի-  
սաւորութեամբ պատկաւորուելնին՝ իբրև վար-  
դապետը-Ռճշիւրեան և վարդաւարեան:

Բազմավիպիս խմբագրութիւնն՝ Թարգման ըլ-  
լալով Մխիթարեան Վերահռութեանն զաց-  
մանց՝ հանդիսապէս իւր ուրախացութեան շնոր-  
հաւորութիւնները կը յայտնէ վերոյիշեալ նորա-  
պսակ բժշկապետներուն, որոնց դժբաղուսիկ  
մանկութենէն սկսեալ՝ խնամածու եղած է Միա-  
բաւութիւնս, և իրենց արծանաւորութիւննին

գնահատած, և գիրենք քաջալերած է միշտ՝ իրենց  
երկարամեայ ուսմանց շրջանին մէջ, նոյն իւր  
տարրական դպրոցներու և միջնակարգ վարժա-  
բաններուն մէջ յԱրեւելս, և յետոյ իւր Մուրա-  
նափայլեան Լէզիսին և Համալսարանական  
ամբիթոցներուն մէջ ի Վինետիկ և ի Պատուա:

Վերոյիշեալ բժշկապետք՝ շնորհիւ իրենց ընտիր  
վարուց, ազնիւ ձիրքերով, կամքի տոկունու-  
թեամբ և մտաւորական հարստութեամբ՝ արդա-  
բացուցին իրենց վրայ գրուած յոյսը, ոչ միայն  
իրենց անմիջական դաստիարակներէն և ուսու-  
ցիչներէն, այլ և Միաբանութեանս ընդհանրու-  
թենէն, և անմահ բարեբարացն Սամուէլ Մու-  
րատի և Եղուարդ Ասփայլելի՝ հայազգի ման-  
կանց վրայ աներեսութեամբ հսկող և գործու-  
րացող հոգիներէն:

Վերոյիշեալ պատկաւորեալ գիտուններն՝ ներ-  
շնչուած Մխիթարայ — Մուրատայ — Ռափայելի  
մեծ գաղափարականէն, վստահ ենք՝ որ իրենց  
այսքան տարիներու ճշմանք արդիւնքներով պիտի  
փայլին իւրաքանչիւրն իրենց ընտրած մասնա-  
ճիւղ-բժշկութեան մէջ, և իրենց գիտական բարձր  
արուեստին բարեբար ազդեցութիւնը սպազայի  
մէջ իտրապէս զգացնել պիտի տան՝ ոչ միայն  
հայազգի վշտակներոց, այլ և համազգային բա-  
րեգործութեամբ՝ մարդկային ամէն գասակարգի  
ախտակիրներուն, բժշկելով իրենց հիւանդու-  
թիւններն ու վէրքերը, և առողջներուն՝ իրենց  
քաջողութիւնը պահպանելու համար՝ նախա-  
պահեստ զգուշութիւններ և կանոններ աւանդե-  
լով:

\*  
\*\*

Պատշաճ պիտի համարէինք վերոյիշեալ նոր-  
բժշկապետներէն իւրաքանչիւրին կենսագրական  
ծրագրծնին՝ երկտողով մը ծանուցանել ընթեր-  
ցասէր հասարակութեան, եթէ ժամանակիս  
պարագաները չտարիպէին գմբգ փափկանկատու-  
թեամբ զանցառու ըլլալու այդ պատշաճողու-  
թեան:

Նիկայի չենք ուզեր անյիշատակ թողուլ իրենց  
ընթացակից երիտասարդի մը նուիրական հետ-  
քը, Էլեոն Թօփայեանի Աբասապուցւոյ, որուն  
ծաղկատի գարնանային կեանքը և շնորհափայլ  
մտաւորական ու նիւթական ձիրքերը՝ տարիէ  
մ'աւելի է՝ որ սեւ հողերը ծածկած են արուա-  
տաւթոր աշներէ՝ իւր դառնակսկիծ ազնիւ ճնո-  
ղաց և մեծաւորաց, ինչպէս նաեւ սրտախոց  
դաստիարակաց, ուսումնակցաց և բարեկամաց:  
Հանգուցեալը՝ նախկին աշակերտ Մխիթարեան  
վարժարանին Պատը-Գիւրի (Կ. Պոլիս), իր գեր-  
ագնիւ ընաւորութեամբ և քոջ ուսումնասիրու-

Թեամբ՝ շարունակեց բարձրագոյն ուսանողու-  
թիւնը վինետոյ Մուրատ-Ռափայելեան Լիկեո-  
նին մէջ, ուսկից վերոյիշեալներու հետ անցաւ  
իբրև Ռուսանոց բժշկութեան՝ Պատուայի Համա-  
լսարանը, որուն մինչև հինգերորդ տարեշրջա-  
նը փայտուն կերպով կատարեց. իսկ վեցերորդը  
չսկսած՝ անակնկալ և անգութ հիւանդութիւն  
մը քանադառեց զինքը նախ և Պոլիս իւր ըն-  
տանեկան շրջանին մէջ վերադառնալու, և ան-  
կից ալ քիչ ժամանակէն՝ երկնային հրշանիկ  
հոգւոց կաճառին մէջ վերամբառնալու, ամե-  
նայն գիտութեանց բուն աղբիւրակնէն հօգւով  
և մտքով ստանելու և գմայիլելու համար :

\*  
\*\*

Ուրիշ պատշաճատրութիւն մ'ալ սիրայօժար

կը կատարէ Խմբագրութիւնս՝ հանդիսապէս շնոր-  
հակալութիւն յայտնելով ի դիմաց Ռուսեմա-  
կան Ժողովոյ վանացո՛ առ Մեծապ. Բժշկա-  
պետ Երուսնոց Արսլան, Ազատակամ Ռուսցիչ  
Պատուայի Համայնարանին և նշանաւոր մաս-  
նագէտ վիրաբոյժ-բժիշկ, իրեն առ վերոյիշեալ  
պատկաւորս ցոյց տուած բարոյական ձեռն-  
տուութեան և խրախուսանաց համար, ինչ որ  
կը շարունակէ նաեւ այժմ անոնց յաջորդներուն,  
այն ազնուական զգացմամբ՝ որ յատուկ է մի և  
նոյն՝ դպրոցի երիցագոյն ուսումնաւարտի մը  
դէպ ի կրտսերներն, և տոհմասէր անհատի մը  
դէպ իւր հոյրենակիցները և իբր բարձր ա-  
րուեստին և ստանաւորս ասպարիզին մէջ հե-  
տեւիլ ուղղոյները :

Հ. Ա. ՏԻՐՈՒԱԿ.

## Գ Բ Ա Կ Ա Ն Ա Կ Ա Ն Ք



### ԻՆՆԵՒՏԱՍՆԵՐՈՐԴ ԴԱՐՈՒ

### ԱՆԳԼԻԱՑԻ ՄԱՏԵՆԱԳԻՐՆԵՐ

#### Ս Կ Ո Տ

Սկոտ (Ռալաէր), ծնած է Էսթիմուրցի  
մէջ 1771, օգոստոս 15ին, և մեռած Լպ-  
պրոլչֆորաի մէջ 1832, սեպտեմբեր 21ին :

Սկոտիացի ամենահին բնուանիքէ մը  
յտառջ եկած, որուն ծննդաբանութիւնը գրած  
է իւր անդամներէն մին՝ Ռալաէր Սկոտ Սէ-  
չիլ զօրաւարը (1614-94) : Սկոտ իւր ման-  
կութենէն սկսեալ ցոյց տուաւ մեծ կարո-  
ղութիւն մը՝ անհանդարտ բնատրութեան մը  
հետ :

Շատ կը կարգար. ինքն անձամբ կատա-  
րելագործեց իւր ստացած թերի կրթու-  
թիւնը :

Տարբարեկան էր, իբր իւր հայրը զինք  
իւր ջով առաւ իբրև գրողի : Մեծ գէշ  
կերպով օրինակելու բաւական օրինակիտա-

կան հատուածներ, Ռալաէր, ձանձրացած  
սոյն պաշտօնէն, 1792ին իբրև փաստա-  
բան արձանագրուեցաւ յԷսթիմուրց : Հնա-  
բիշ գատ պաշտպանեց և շատ զուարճացաւ :  
Ընկերական, զուարթ, վայելուչ և սրախօս  
ըլլալով՝ կը մասնակցէր շատ խնջոյքներու,  
և սիրիլի էր ամէն ընկերութեան մէջ, Եր-  
կար արշաւանքներ կ'ընէր Սկոտիայ ամէն  
կողմը, հաւաքելով կրքածին շափ՝ վիսպա-  
սանական զօրոյցներ, և զիրութեամբ սովորե-  
լով՝ անգղական ամէն գաւառաբարբառ : Ի  
վերջոյ զերմաներէն ալ սովորեցաւ :

Գաղղիական յեղափոխութիւնը՝ զինքը  
ձկեց հայրենասիրական խանդավառութեան  
մը ճոյնածափին մէջ : Ուրպէս զի արգելու ա-  
նոր մուտքը յԱնգղիա, ասպետներու խումբ  
մը կազմակերպեց (1797), սր սակայն պա-  
տերազմի մէջ չմտաւ :

Թէպէտեւ ինքը շատ յաջողութիւններ գր-  
տաւ իբրև փաստաբան, սակայն անցիմա-  
գրելի ձկաւում մը կը զգար դէպ ի գրական-  
նութիւնը, ուստի 1799ին ետքը ինքզինք  
ըլլորովին անար նուիրեց : Բայց ինքն արդէն